# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի և «ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ ԵՎ «ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ-Ի ՄԻՋԵՎ 23.08.2020Թ. ԿՆՔՎԱԾ N ՀՏԶՀ-ՏՀ-ԽԲՄ-ԾԶԲ-2020/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» ապրիլի 2021թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ ԵՎ «ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ-ը, ի դեմս «ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ-ի տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, «ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին Կողմեր, հիմք ընդունելով 23.08.2020թ. կնքված «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման գնման ՀՏԶՀ-ՏՀ-ԽԲՄ-ԾԶԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված 1-ի (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) «Տեխնիկական առաջադրանքում» կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ.

   «Հեղինակային հսկողություն

   Պատվիրատուն պետք է իրականացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարի 1998թ. սեպտեմբերի 28-ի թիվ 143 հրամանով նախատեսված «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման հրահանգում» ներառված գործառույթները:»,
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը,
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ,
4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երեք օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | |
|---|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ ՓԲԸ | ԷՅՋԻԹԻ Փրոջեքթ ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0014, Դավիթ Անհաղթ 23 | Հասցեն՝ ՀՀ, ք. Հրազդան, Շինարարների փողոց, 70 տուն |
| ՀՎՀՀ՝ 00846441 | ՀՎՀՀ՝ 00802905 | ՀՎՀՀ՝ 03024399 |
| Հ/Հ՝ 900018007725 | Հ/Հ՝ 1150000461811810 | Հ/Հ՝ 11815011091400 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ | Բանկ՝ Այ Դի Բանկ ՓԲԸ |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն | Տնօրեն |
| Արթուր Սողոմոնյան | Էդուարդ Մարտիրոսյան | Գ. Գրիգորյան |
| ստորագրություն | ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ. | Կ.Տ. | Կ.Տ. |